



117. ԳԵՂԱՑԻՆ ՈՒ ՎԵՍԿԻՆ

Մի քասիր գեղացի գնում ա վարի. մի քիչ վարում ա, վարում, մհել անում ա հողի տակին մի բան ա ըրելում, քանդում ա տենում ա մի կճուճ դուս էկավ, մեջը լիքը վեսկի:

Բացում ա մտիկ անում, մտիկ, աշկերին հվատում չի, մեկ էլ տենում ա, քյոխվեն դալիս ա, եղնիքը կղնացնում ա, կանչում.— Արա հե՛յ, արի ըստի, արի՛:

Ասում ա.— Կանչեմ շհանց տամ, նա կանանաչի վեսկի ա, թե չէ:

Քյոխվեն դալիս ա, ասում ա.— Ի՞նչ ես ասում:

Բախար թողում չի վեր սա ասի, ասում ա.— Քյոխվա ջա՛ն, կարա՞ս ասես, կարմիր եղն ա լավը, թե՞ չալը:

էս քյոխվեն կնդվում ա, պլետը քաշում ա սրան մի լավ ջարդում, փշրում, ասում ա.— Շուն շան տղա՛, եղնիքը քունն ա, ի՞նչ ես ասում, վե՞ր եղն ա լավ քաշում:

Քյոխվեն թողում ա դնում, մեկ էլ տենում ա հրես ստրածնիկնի են դալի, սրանց էլ ա կանչում, սրանք էլ են դալի, ըլետ րախտը թողում չի, վեր սա ասի, սրանց էլ ասում ա.— Կարա՞ք ասեք լրևկվա վարածս ա շատ, թե՞ էսօրվանը:

Սրանք էլ են էս մարդին լավ ծեծում, ջարդում, փշրում:

Իրդունը էս մարդը կճուճով վեսկին բերում ա տուն, ասում ա.— Ա՛յ վնիկ, ըսօր մի պուլիկ վեսկի եմ դթել, առ պհի, տանենք թաղավերին փեշքեշ տանք:

Կնիկը ձեռաց վեսկին զրդակում ա, մեջը ախպ-մախպ ա  
լցնում, բերանը կապում, դնում մեշոկը:

Էս մարդը վեր ա կենում ըռավետը քշերով մեշոկը շլակում,  
դալիս ա թագավերի կուշտը, ասըմ ա.— Թագավերի հմար վեսկի  
ևմ բերել, թողեք դնամ:

Սրան ասնըմ եմ թագավերի կուշտը:

Թագավերը ասըմ ա.— Ի՞նչ ես ուղում:

Ասըմ ա.— Թագավեր ջա՛ն, քեղ հմար մի կճուճ վեսկի եմ  
բերել:

Թաղավերը ասըմ ա.— Մի խալչա բերեք, փոեցեք:

Խալչեն փորմ են, կճուճը հանում ա, բացում զրգակում, տե-  
նում են էգ խալչի վրա ինչ տեսակ ախպ-կեխտ ասես թափվեց:

Թագավերը ասըմ ա.— Սրան տարեք բանդը գցեցեք, սա ինձ  
ձեռ ա առել:

Սրան ասնըմ են գցում բանար:

Ասըմ ա.— Գնացեք թաքուն անգաճ դրեք, տեսեք ի՞նչ ա խո-  
սում:

Սա ուղում ա իրան-իրան ասի. «Ախր իմ գտածը վեսկի էր,  
էն ախպը ու կեխտը ո՞վ ա պուլիկը ածել», էլ եդ բախտը թողում չի,  
վեր սա բան խոսա:

Սկսում ա իրան-իրան ձեռով վետով անիլը, գալիս են ասըմ.  
«Սըհե-սըհե բան»:

Ասըմ ա.— Կանչեցե՛ք:

Բերում են պալատը:

Թագավերը ասըմ ա.— Էն ի՞նչ ես քեզ ու քեզ խոսում:

Թախտը թողում չի, վեր սա դուզը պատմի: Ասըմ ա.— Հեչ, իմ  
խոսացածը քու գլխի բանը չի, ի՞նչ կարաս հսկանաս:

Թագավերը ասըմ ա.— Սրան տարեք գցեցեք մարագը, վառե-  
ցեք:

Սրան տանում են գցում մարագը վեր վառեն, ծուխը լցվում ա  
թե չէ, սա փախչում ա գալիս թագավերի կուշտը: Ասըմ ա.— Թա-  
գավե՛ր, դու հիմար ես, վեր սհե բան ես անում, չգիտե՞ս, վեր ծու-  
խը աշկերս ա դառնում:

Թագավերը ասըմ ա.— Սրան տարեք մեր քաղաքից դուրս ա-  
րեք, թող գնա ուրիշ աշխարհ:

Սրան տանում են էդ քաղաքիցը դուրս անում:

Սա դալիս ա իրան կնգա կուշտը, էդ վեսկին մարդ ու կնիկ  
ուտում, խմում, քեֆ են անում:

Իրանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մու-  
րազին: